ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 04

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել օրակարգը՝

1. ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2021 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
2. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ
3. ՍԻԱՆՈՍՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

1/19/2017

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 05-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2021 ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Արարատի մարզի Նոր Կյուրին համայնքի 2016-2021 թթ. զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի :

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -4

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
2. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ
3. ՍԻՄՈՆՅԱՆ ՎԱՉԳԵՆ
4. ՕՀԱՆՅԱՆ ԿԱՀԱՆ

1/19/2017

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ

Հաստատված.
Նոր Կյուրին համայնքի
ավագանու 19.01.2017թ. թիվ 05-Ն որոշման
Համայնքի ղեկավար՝ Զ. Օհանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2016-2021թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 2

1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում..... 3
2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների սահմանում.....16
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում..... 18
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում...19.
5. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում.....2
6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզի Նոր Կյուրին համայնքի 2016-2021թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ, համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, ,Տեղական ինքնակառավարման մասին՝ ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի բովանդակությունը պայմանավորված է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակցների աշխատանքով և առաջարկություններով, համայնքում առկա ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ Նոր Կյուրին համայնքը ունի մի շարք առաջնային խնդիրներ : Համայնքի զարգացման ծրագրում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, արտադրության, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես

նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

Համայնքի 2016-2020թթ զարգացման հնգամյա ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և նորընտրի ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Համայնքի զարգացման ծրագիրը դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում համայնքի զարգացման

ծրագրում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Համայնքի զարգացման, բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովման, սոցիալ-մշակութային քաղաքականության ներդրման և բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով համայնքի զարգացման ծրագիրը հանդիսանալու է ամենօրյա աշխատանքային փաստաթուղթ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1 *Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատում*

Նոր Կյուրին համայնքը մոտ է Երևան քաղաքին, ակտիվ կյանքով ապրող համայնք է, որտեղ առկա բոլոր կենցաղային, սոցիալ-տնտեսական խնդիրները հնարավորինս գտնում են իրենց լուծումը՝ համայնքի սահմանափակ բյուջեի հնարավորության սահմաններում , համայնքի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ակտիվորեն մասնակցելու համայնքում որոշումների կայացմանը և գործողությունների իրականացմանը:

? *Համայնքի աշխարհագրական դիրքը.պատմական ակնարկ*

Նոր Կյուրին համայնքը գտնվում է Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանում, Մասիս քաղաքից 5 կմ ավելը ՝ Երևան-Արտաշատ խճուղուն հարակից : Բնակավայրը հիմնադրվել է որպես Նոր Խարբերդի այգեպտղաբուծական տնտեսությանը կից ավան, որը 1991 թ-ից անվանվել է Նոր Կյուրին: ՝ ի հիշատակ Արևմտյան Հայաստանի Կյուրին գյուղաքաղաքի :

Գյուղը տեղադրված է Մերձարաքսյան հարթավայրում, ծովի մակարդակից ունի 860 մ բարձրություն: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3^0-ից -5^0: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24^0-ից 26^0, իսկ առավելագույնը՝ 41^0: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Ըստ 2005 թ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքի բնակչությունը կազմում է 654 մարդ:Կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը նույնն է՝ կազմելով 50-ական տոկոս: Մինչ աշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 25%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 65%, հետաշխատունակները՝ 10%: Գյուղն ունի առկա առկա 192 տնտեսություն:

Ունի դպրոց, մանկապարտեզ, բուժկետ :

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 292հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 152հա: Ունի պտղատու և խաղողի այգիներ՝ մոտ 30 հա: Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբոստանային, հացահատիկային կուլտուրաներ: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Արդյունաբերություն չունի:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 1162 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 590 և կանայք՝ 572 : Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է **աղյուսակ 1-ում**:

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը
1	2	3
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	1162
	Տղամարդիկ	590
	Կանայք	572
	0-6 տարեկան , այդ թվում՝	124
	- 0-4 տարեկան	78
	- 4-6 տարեկան	46
	7-16 տարեկան	140
	18-62 տարեկան	837
	63-ից բարձր տարեկան	72
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	72
	Տարիքային և աշխատանքային	72
3.	Փախստականներ	4
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	5
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	-
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	3
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	24
	Մանկուց հաշմանդամներ	5
9.	Աշխատունակներ	780
10.	Զբաղվածներ	553
11.	Գործազուրկներ, այդ թվում՝	227
	Գրանցված	-
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	273
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝	31

	Նպաստառու ընտանիքների թիվը	31
14.	Հայրենական մեծ և արցախյան պատերազմ-ներում զոհվածների ընտանիքների թիվը	-
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	-
	Անօթևան ընտանիքներ	-
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	25
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	50
18.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	60

1.4 Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ժողովրդի իշխանությունը իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի 5 տարի ժամկետով: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և ,Տեղական ինքնակառավարման մասին Հայսատանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով: 2016թվականի սեպտմբերի 18 - ի ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրվել է համայնքի ղեկավար և ավագանի՝ բաղկացած 5 անդամից : Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը բերված է ստորև՝

Համայնքի ղեկավար - 1 հ/մ

- Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար- 1 հ/մ
- Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ - 1 հ/մ
- Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ-1 հ/մ

1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ

- Տնօրեն- 1 հ/մ
- Հաշվապահ - 0.5 հ/մ
- Խոհարար -1 հ/մ

- Երաժշտական դաստիարակ - 0.25 հ/մ
- Դաստիարակ - 1.25 հ/մ
- Դաստիարակի օգնական - 1.1 հ/մ

1.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով: Համայնքի սեփականություն կարող են լինել անշարժ և շարժական գույքը, դրամական միջոցները և այլն: Համայնքապետարանը գտնվում է համայնքի կենտրոնում: Շենքային պայմանները գտնվում են լավ վիճակում, գույքը նորացված, համալրված է համակարգչային տեխնիկայով: Համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների շենք - շինությունները գտնվում են բարվոք վիճակում Գյուղը չունի գյուղտեխնիկա և այլ գյուղատնտեսական գործիքներ : Խմելու ջրի ներհամայնային ցանցը գտնվում է լավ վիճակում /բացառությամբ համայնքի նախկին ամառանոցային թաղամասի, որտեղ ջրամատակարարող ընկերությունները հրաժարվում են սպասարկել ցանցը , անգամ արդեն մոտ 5 տարի է սպառած խմելու ջրի գումարները չեն գանձվում (սույն խնդրի մասին բազմիցս տեղեկացվել է համապատասխան կառույցներին՝ անգամ վարչապետին , սակայն դեռևս անարդյունք) / , որը կապիտալ վերանորոգվել է 2009 թ. ճանապարհային ցանցը մասամբ վերանորոգման կարիք ունի , անհրաժեշտ է մասնակի վերանորոգել ճանապարհները և փողոցները :
Ստորև ներկայացված է 28 .12. 2015թ. դրությամբ համայնքի սեփականություն համարվող

գույքի ցանկը և վիճակը.

Հազար դրամ

Հ/Հ	Գույքի անվանումը	Քանակը /հատ/	Ծանոթություն	Արժեքը դրամով
1	2	3	4	5
	Հիմնական միջոցներ			
1	Գուղապետարանի շենք	1	1978թ	6177849
2	Պատճենահանման սարք Canon MF3110	1	2005թ	253000
3	Սառնարան NOBEL	1	2006թ	250000
4	Գազի վառարան Aramesh	2	2008թ	200000
5	Համակարգիչ	1	2009թ	200000
6	Ջրի Սարք MEGA	1	2010թ	120000
7	Ալեհավաք	1	2010թ	100000
8	Տպիչ սարք Canon F151300	1	2010թ	100000
9	Փոշեկուլ	1	2010թ	60000
10	Հեռուստացույց	1	2011թ	200000
11	Ավտոմեքենա KIA CERATO	1	2012թ	6882600
12	Համակարգիչ	1	2013թ	278500
13	Օդափոխիչ	1	2013թ	460000
14	Սեբևնայի գազաբալոն	1	2013թ	429450
15	Արբանյակային ալեհավաք	1	2013թ	111600

16	Գազոջախ/ եվիրատվություն մանկապարտեզին	1	2013թ	138000
17	Երկաթյա կանգառ	2	2014թ	700000
18	Wi Fi Սարք TP-Link	1	2014թ	20000
19	UPS Invader A600	1	2014թ	20000
20	Գազի հաշվիչ	1	2014թ	35000
21	Համակարգիչ	1	2014թ	309000
22	Պատճենահանման սարք Canon MF3010	1	2014թ	45000
23	Գյուկոմետր /բուժկետին/	1	2014թ	21600
24	Մանկական կշեռք հասակաչափով /մնակապարտեզին/	1	2014թ	66000
25	ստետոսկոպ /բուժկետ/	1	2014թ	1800
26	Թեյնիկ էլեկտրական Saachi	1	2015թ	25000
27	UPS Մարտկոց	1	2015թ	25000
	Ընդամենը հիմնական միջոցներ			17229399
Հ/Հ	Շրջանառու միջոցներ	Քանակը /հատ/	Ծանոթություն	Արժեքը դրամով
1	Սեղան ամսագրի	1	2008թ	10000
2	Աթոռ	4	2010թ	116000
3	Պահարան	1	2010թ	100000
4	Սեղան	3	2010թ	300000
5	Գրասեղան	3	2010թ	50000
6	Բազկաթոռ	1	2010թ	150000
7	Հեռուստացույցի տակդիր	1	2010թ	50000
8	Բազկաթոռ	1	2014թ	80000
	Ընդամենը			856000

Ընդամենը միջոցներ	18085399

1.7 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր Կյուրին համայնքը չունի գլխավոր հատակագիծ և գոտիավորման նախագիծ: Քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթերից առկա է քաղաքաշինական կադաստրի վարման մատյանը, քաղաքաշինական կանոնադրություն և այլն: Համայնքը որոշ հատված ունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի): Նոր Կյուրին համայնքում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանություն շաբաթը մեկ անգամ, սակայն համայնքի տարածքում աղբամանների բացակայությունը բացասաբար է անդրադառնում համայնքի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

Նոր Կյուրին համայնքում միայն կենտրոնական և 6-րդ փողոցներն են ապահոված ցերեկային լուսավորությամբ՝ մոտ 1կմ :

Համայնքը խմելու ջուր է ստանում Երևան քաղաքից շուրջօրյա: Համայնքը մասամբ գազաֆիկացված է՝ բացառությամբ նախկին ամառանոցային թաղամասի , որտեղ գազաֆիկացումը իսպառ բացակայում է :

1.8 Զբաղվածություն

Համայնքի վարչական տարածքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածներ՝ 553 մարդ, այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական աշխատանքով զբաղվածներ՝ 110 մարդ, գյուղատնտեսական աշխատանքներում զբաղվածներ՝ 443 մարդ, 50 մարդ մեկնում է արտագնա աշխատանքների:Աշխատանքների պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելուն:

Համայնքի տարածքում գործում են 2 մթերային խանութ, 1 հացի փուռ և 1 գյուղմթերքի մերամշակման արտադրամաս :

Բնակիչների հիմնական եկամուտը ստացվում է տնամերձ և գյուղատնտեսական հողամասերի մշակումից:

1.9 Գյուղատնտեսություն, հողատարածքների օգտագործում

Նոր Կյուրին համայնքը դասվում է գյուղատնտեսությամբ զբաղվող համայնքների շարքին: Համայնքում առկա է գյուղատնտեսական նշ. հողամասերից ստացված բերքի իրացման ցածր եկամտաբերության խնդիրներ, քանզի առկա է ոռոգման ջրի բարձր մակարդակ / համայնքի բնակիչների համար 1 հա -ի համար 1 անգամյա ոռոգումն արժե 25.000 ՀՀ դրամ / : Համայնքի վարչական տարածքը 459.47 հա է, որից 266.45 հա գյուղ.նշանակության հողեր:

Համայնքի վարչական տարածքը	- 459.47 հա ,
որից	
քաղաքացիների սեփականություն	-286.91 հա
պետական սեփականություն	-- 20.37 հա
համայնքային սեփականություն	-147.21 հա, որից 3.39 հա- հատուկ պահպանվող տարածք՝ գերեզմանոցներ
իրավաբանական	-4.98 հա

Նոր Կյուրին համայնքի հողային ֆոնդի բաշխումը բերված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

NN	Նպատակային ծրագրերի	Հոդատեսք, գործառնական նշանակություն	NN վեր	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ										
					Վերջին բաժանումից ետ	Ցեղային գրանցումից ետ	Համայնքային				Պետական				Իրավաբանական անձանց բաժնետոմսերի (բաժնեմասերի)
							Ընդամենը (4+5+6+7)	Գյուղատնտեսական նշանակության հողեր	Բնակելի կառուցապատման հողեր	Այլ գյուղատնտեսական նշանակության հողեր	Ընդամենը (9+10+11)	Գյուղատնտեսական նշանակության հողեր	Բնակելի կառուցապատման հողեր	Այլ գյուղատնտեսական նշանակության հողեր	
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.1	1. Գյուղատնտես. նշան.	վարելահող		89.25	60.42		28.83		2.00	26.83					
1.2		բազմ տնկարկներ, ընդամենը		52.98	52.98										
1.2.1		այդ թվում պտղատու այգի		51.62	51.62										
1.2.2		խաղողի այգի		1.36	1.36										
1.2.3		այլ բազմամյա													
1.3		խոտհարք													
1.4		արոտ		74.22	29.66		44.56		37.06	7.50					
1.5		այլ հողատեսքեր		50.00	4.50		45.50			45.50					
1		Ընդամենը		266.45	147.56		118.89		39.06	79.83					
2.1	2. Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		118.49	117.67		0.82			0.82					
2.1.1		այդ թվում տնամերձ հողեր		30.07	29.25		0.82			0.82					
2.1.2		այգեգործական (ամառ-Ց)		88.42	88.42										
2.2		հասարակական կառուցապ		5.21	0.03		1.99	1.35		0.64	3.19	3.19			
2.3		խառը կառուցապատման													
2.4		ընդհանուր օգտագործման		18.86			18.86			18.86					
2.5		այլ հողեր		0.69	0.29		0.40			0.40					
2		Ընդամենը		143.25	117.99		22.07	1.35		20.72	3.19	3.19			
3.1	3. Արդյունաբերության և այլ գյուղատնտես. նշան.	արդյունաբերության													
3.2		գյուղտնտեսական, արտադր.		28.40	21.36	4.95	2.09			2.09					
3.3		պահեստարանների													
3.4		ընդերք օգտագործման													
3		Ընդամենը		28.40	21.36	4.95	2.09			2.09					
4.1	4. Տրանսպորտի, կապի, կոմունալ էներգետիկայի	էներգետիկայի		0.12		0.03	0.09			0.09					
4.2		կապի									7.46			7.46	
4.3		տրանսպորտի		7.46											
4.4		կոմունալ ենթակառուցվածք									7.46			7.46	
4		Ընդամենը		7.58		0.03	0.09			0.09					
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական													
5.1.1		այդ թվում արգելոցներ													
5.1.2		արգելավայրեր													
5.1.3		ազգային պարկեր													
5.2		առողջարարական													
5.3		հանգստի													
5.4		պատմական և մշակութային		3.39			3.39			3.39					
5		Ընդամենը		3.39			3.39			3.39					

6	7. Մեքենային	Ընդամենը												
7.1		անտառ												
7.2		թփուտ												
7.3		վաղելահող												
7.4		խոտհարք												
7.5		արոտ												
7.6		այլ հողեր												
7		Ընդամենը								5.89			5.89	
8.1	8. Շրջակա	գետեր		5.89										
8.2		ջրամբարներ												
8.3		լճեր												
8.4		ջրանցքներ		4.51			0.68		0.68	3.83			3.83	
8.5		հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ												
8		Ընդամենը		10.40			0.68		0.68	9.72			9.72	
9.1	9. Պետական	աղուտներ												
9.2		ավազուտներ												
9.3		ճահիճներ												
9.4														
9.5		այլ անօգտագործելի հողեր												
9		Ընդամենը												
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)				-459.47	286.91	4.98	147.21	1.35	39.06	106.80	20.37	3.19		17.18

1.10. *Բնակարանային և կոմունալ տնտեսություն*

Համայնքի բնակելի ֆոնդը կազմում է 136 առանձնատուն, որից 48 երկհարկասնի է,որոնք սեփական միջոցներով կառուցված բնակելի տներ են , և 20՝ բազմաբնակարան շենքերի բնակարաններ : Համայնքում վթարային շենքեր, չկան :

1.11. *Բնության և շրջակա միջավայրի պահպանություն*

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կեսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքի մաքրության հարցն է: Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքի աղբահանության կազմակերպումը այսօր բավարար հիմքերի վրա է, սակայն անհրաժեշտ է օր օրի որոնել և օգտագործել նոր տեխնոլոգիաներ բնության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար:

Համայնքի բնակիչներից շատերը դեռևս տնտեսական, հաճախ նաև շինարարական աղբը թափում են աղբի համար անթույլատրելի տարածքներում: Սանիտարական մաքրման և աղբահանության ասպարեզում անելիքները դեռևս շատ են: Տնտեսության

առջև ծառացել են բազմաթիվ խնդիրներ, որոնց շուտափույթ լուծումը կոժանդակի աղբահանության աշխատանքների օպերատիվ իրականացմանը:

1.12 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը կենտրոնական ճանապարհները ասֆալտապատ են , իկս գյուղամիջյան փողոցներև մեցամասամբ խճապատված են, որոշ փողոցներ համայնքի բնակիչների միջոցներով ասֆալտապատված են: են: Համայնքի ներբնակավայրային ճանապարհների մոտ 40%-ը բարեկարգ են:

1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- Համայնքը ունի միջնակարգ դպրոց ,որը կառուցվել է 1980- անաններին: 2006 դպրոցը մասնակի վերանորոգվել է: Դպրոցի ունի 185 աշակերտ , 22 ուսուցիչ: Դպրոցը ունի հիմնավերանորոգման կարիք , սանհանգույցը գործում է միայն առաջին հարկում, իսկ 2-րդ հարկում՝ ոչ : Դպրոցը գազաֆիկացված չէ :
- Համայքնը ունի մանկապարտեզ, որը չունի դահլիճ : Մանակապարտեզում գործում է մեկ խումբ թվով 30 երեխա: Շենքը սակայն ունի վերանորոգման կարիք , չնայած 2012 թ. այն մասամբ վերանորոգվել է բարեգործական աշխատանքների շրջանակներում: Մանկապարտեզը համալրված է դիդակտիկ նյութերով, խաղերով, բազմահարկ խաղալիքներով, ճոճանակներով և այլն : Բոլոր պայմանները ստեղծված են երեխաների բազմակողմանի զարգացման համար, ապահովված են կյանքի և առողջության բոլոր պայմանները , սակայն գազաֆիկացված չէ . մանկապարտեզը համայնքի ֆինանսական սուղ պայմաններից և ջեռուցման բացակայությունից ելնելով գործում էր յուրաքանչյուր տարի տարվա ապրիլի 1-ից մինչ սեպտեմբերի 30-ը , սակայն 2016 թ. գործել է նաև հոկտեմբեր ամսին ամբողջությամբ , որը 2017 թ. ևս պլանավորված է :

1.14 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Նոր Կյուրին համայնքում գործում է բուժկետ՝ համալրված անհրաժեշտ սարքավորումներով, որոնց մի մասը համալրվել է համայնքի միջոցներով :

1.15 *ՄՇԱԿՈՒՅԹ ՍՊՈՐՏ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ*

Համայնքում մշակույթի տներ կամ սպորտդահլիճներ առկա չեն , առկա է միայն ֆուտբոլի դաշտ , որը սակայն կարիք ունի անհրաժեշտ համալրումների, համայնքի տարածքում առկա է նաև զոհված ազատամարտիկների հիշատակին բարեգործական հիմունքներով կառուցված եկեղեցի , որը սակայն դեռ անավարտ է :

1.16 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում է քաղաքացու սեփականություն հանդիսացող երկու մթերային՝ ոչ մասնագիտացված խանութեր, մեկ հացի փուռ և մեկ նորաբաց մրգի վերամշակման արտադրամաս , որտեղ դեռևս հիմնականում արտադրվում են ալկոհոլային խմիչքներ :

1.16 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են նաև

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը մայրաքաղաքին)
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման,
- Համայնքում գործող դպրոցի և բուժամբուլատորիայի առկայությունը
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը
- Համայնքում խմելու ջրի շուրջօրյա առկայությունը, բացառությամբ համայնքի 3 փողոցի , որտեղ խմելու ջուր է մատակարարվում օրական 10-ից 12 ժամ և բացառությամբ նախկին ամառանոցային թաղամասի հատվածի , որտեղ խմելու ջուրը մատնված է բարձիթողի վիճակի
- Կենտրոնական փողոցի լուսավորումը
- Համայնքում գազամատակարարման առկայությունը
- Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքը Երևանի շուկաներում սպառելու հնարավորությունը
- Համայնքում մանկապարտեզի առկայությունը

1.17 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքում ոռոգման ջրի բարձր գինը , ինչի պատճառով համայնքի գյուղատնտեսական նշանակության հողամասերի մշակությունը տարեցտարի պակասում է,
- Համայնքային որոշ ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը,
- Միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի կապիտալ վերանորոգման անհրաժեշտություն, գազաֆիկացում ,
- Համայնքի նորակառույց հատվածի ներքին ոռոգման ցանցի և գազաֆիկացման բացակայություն,
- Նոր Կյուրին համայնքի տնամերձ հողամասերը սնուցող հիմնական ջրագծի անբարեկարգ վիճակ , որը կառուցվել է 1980 - ական թթ. և կարիք ունի հիմնանորոգման ,
- ջրահեռացման կենտրոնացված համակարգերի (կոյուղու) մասնակի բացակայությունը ,
- Համայնքում սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազայի և ֆինանսական հնարավորությունների բացակայությունը ,
- Գործազրկության բարձր մակարդակը ,
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը,
- Համայնքում տարեցտարի շարունակվող արտագաղթը՝ իր բոլոր բացասական հետևանքներով,
- Համայնքի ամառանոցային թաղամասի փողոցների խիստ անբարեկարգ վիճակը,
- Համայնքի ամառանոցային թաղամասի խմելու ջրի հետ կապված խնդիրները ,

1.18 ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համեմատաբար լայն գյուղատնտեսական հնարավորություններ , որին դեռևս խոչընդոտում է համայնքում կիրառվող ոռոգման ջրի սակագնի բարձր մակարդակը .
- Մեծ աշխատուժի առկայություն .
- Ուղղակի ընտրություններով համայնքի ղեկավարի ընտրության հնրավորություն ,

1.19 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Համայնքի ամառանոցային թաղամասի խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերնորոգման անհրաժեշտությունը /կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների աղբյուր/.
- Համայնքի դպրոցի և մանկապարտեզի գազաֆիկացման բացակայությունը նպաստում է համայնքի դպրոցից աշակերտների արտահոսքին .
- Համայնքում բնակիչների հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար վիճակը.
- Աղբամանների բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը.
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը.
- Համայնքում ոռոգման ջրի սակագնից կաղված համայնքի գյուղատնտեսական հողամասերի մշակության խորացող խնդիրները **/ոռոգման ջրի սակագինը 1 հա-ի համար 1 անգամ ոռոգելն արժե 25.000 ՀՀ դրամ /** ,

1.20 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Նոր Կյուրին համայնքում աշխատանքի և սոցիալական ծառայություններ չեն գործում:

1.21 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքում վերջին տարիների ընթացքում նկատելի էր որոշակի դրական տեղաշարժ ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում: Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Համայնքներում կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ: Հիմնականում բոլոր միջոցառումները, այդ թվում նաև ավագանու նիստերը, տեղադրվում են համայնքի պաշտոնական կայքում norkyurin.am -ում , որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը: Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի

ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

1.22 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս սաղմնային վիճակում է: Աղետների դեպքում համայնքը ունի բնակչության տարահանման հանձնաժողովը, բնակչության տարահանման գործողությունների պլանը ևս մշակված է :

Համայնքում առայժմ չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման որևէ գործողություն, որի հիման վրա հնարավոր կլիներ պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ: Այս խնդիրը կարևոր է, համայնքին սպառնացող աղետների ռիսկի կանխման նկատառումներով :

1.23 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող արտադրական ՍՊԸ-ների և ԱՁ-ների, առևտրի մանր կետերի, որոնց հետ ՏԻՄ-երը պաշտպանում են լավ ու բարյացկամ հարաբերություններ, սակայն դրանով հանդերձ, միևնույն է, համայնքում բիզնեսի վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի, որոշակի բարվոք է համայնքի գյուղատնտեսական բիզնեսը , որը սակայն տարեցտարի գրանցում է ավել ու ավելի բացասական ցուցանիշներ՝ կապված ոռոգման ջրի սակագնի հետ :

1.24 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Շարունակել ակտիվ աշխատանքներ տանել համայնքի ոռոգման ջրի սակագնի նվազեցման կապակցությամբ , քանզի համայնքն ունի գյուղատնտեսական համեմատաբար լայն հնարավորություններ
- Շարունակել ակտիվ քննարկումներ կազմակերպել համապատասխան գերատեսչությունների հետ համայնքի նախկին ամառանոցային թաղամասի խմելու ջրի ցանցը որևէ ջրամատակարարող ընկերությանը հանձնելու կապակցությամբ
- Համայնքի նորակառույց հատվածի ներքին ոռոգման ցանցի և գազաֆիկացման կառուցում
- Նոր Կյուրին համայնքի տնամերձ հողամասերը սնուցող հիմնական ջրագծի , որը կառուցվել է 1980 - ական թթ., հիմնանորոգում
- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ դպրոցների շենքերի նորոգման և ջեռուցման, ներքին հարդարման, դռների, պատուհանների և սանհանգույցների փոխարինման միջոցով, որը համայնքի ֆինանսական սուղ միջոցներով հնարավոր չէ
- Խելամտորեն օգտագործել համայնքի ֆինանսական միջոցները,
- Խթանել քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների որակյալ մասնագետների հոսքը համայնքի աշխատակազմ՝ հնարավորինս բարձրացնելով համայնքային ծառայողների և այլ աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը

- Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ ավելի որակյալ մասնագետների աշխատանքի, տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման
- Բարձրացնել ՏԻՄ-երի ինքնուրույնության մակարդակը՝ մշակելով և իրականացնելով նպատակամետ ու արդյունքահեն համայնքային քաղաքականություններ, ռազմավարություններ և ծրագրեր
- Աստիճանաբար ընդլայնել համայնքի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների շրջանակը, կիրառել յուրաքանչյուր ծառայության մատուցման մասշտաբի էֆեկտը (նվազեցնելով ծառայության միավորի վրա կատարվող ծախսերը), ըստ այդմ՝ բարձրացնել ծառայությունների մատուցման ծավալները և արդյունավետությունը, և, որպես հետևանք, բնակչությանը դրանց հասանելիության և որակի մակարդակները
- Էականորեն մեծացնել համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված հնարավորությունները՝ կապված համայնքի սեփականություն համարվող հողային, գույքային և ֆինանսական ռեսուրսների բազային ծավալների մեծացման և դրանց նպատակային օգտագործման հետ
- Համայնքի տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝փոքր և միջին բիզնեսի և գյուղատնտեսության) զարգացմանը
- Մեղմացնել համայնքում ՏԻ վրա բնակիչների ազգակցական կապերի հնարավոր բացասական ազդեցությունները
- Նպաստել համայնքի ավագանու ինստիտուտի կայացմանը, որի շնորհիվ կուժեղանա համայնքի ներքին վերահսկողության համակարգը և, արդյունքում, կբարձրանա համայնքի ընդհանուր կառավարման արդյունավետությունը
- Բարձրացնել համայնքի ՏԻՄ-երի փոխհարաբերությունների և համագործակցության մակարդակը ՀՀ պետական կառավարման մարմինների հետ՝ նպաստելով համայնքի աստիճանական զարգացմանը
- Հնարավորինս արագ կայանալ և պատրաստ լինել՝ ընդունելու և իրականացնելու ՏԻՄ-երին օրենքով ակնկալվող նոր սեփական և պատվիրակված լիազորություններ՝ համապատասխան ֆինանսական միջոցներով
- Համայնքում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, համայնքում պատշաճ մակարդակով կազմակերպելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցների հասանելիության ապահովման միջոցով նպաստել ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության, համայնքային ծառայությունների մատուցման մակարդակի կտրուկ բարձրացմանը, արտաքին աշխարհի հետ նոր կապերի ու համագործակցության հաստատմանը և համայնքային տնտեսությունում լրացուցիչ ներդրումների ապահովմանը:

- համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առևտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական

ինքնակառավարման մարմինների, ՔՀՄՀ-ի կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում,

- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,

- Տի-անը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքի կենտրոնում հասարակական տրանսպորտի գործունեության բոլոր ավտոկանգառների ստեղծում,

- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ դպրոցների շենքերի նորոգման և ջեռուցման, ներքին հարդարման, դռների, պատուհանների և սանհանգույցների փոխարինման միջոցով,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների (մանկապարտեզների, մշակույթի տան և գրադարանի, բուժամբուլատորիայի) շենքերի հիմնանորոգում կամ վերակառուցում,
- համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատներին և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով արտոնություններ տրամադրելու) միջոցով:
- շարունակել ակտիվ քննարկումներ կազմակերպել համապատասխան գերատեսչությունների հետ համայնքի ոռոգման ջրի սակագնի հետ կապված
- շարունակել ակտիվ քննարկումներ կազմակերպել համապատասխան գերատեսչությունների հետ համայնքի նախկին ամառանոցային թաղամասի խմելու ջուրը որևէ ջրամատակարարող ընկերությանը հանձնելու կապակցությամբ
- համայնքի դպրոցի և մանկապարտեզի շենքի գազաֆիկացում
- համայնքի նորակառույց հատվածում ներքին ոռոգման ցանցի կառուցում՝ տնամերձ հողամասերը ոռոգելու նպատակով
- համայնքի նորակառույց հատվածի գազաֆիկացում
- Նոր Կյուրին համայնքը սնուցող ոռոգման ցանցի հիմնանորոգում

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Նոր Կյուրին համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, հատապտուղների վերամշակման, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- չխորացնել համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի միջև առկա տարբերությունները և զարգացման անհամաչափությունները, ապահովել բնակավայրերի աստիճանական ինտեգրումը և համաչափ զարգացումը / բնակավայրերի տերմինը օգտագործվում է պայմանականորեն , որը վերաբերում է համայնքի նախկին ամառանոցային թաղամասին/ ,
- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,
- համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առնտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ՔՀՄՀ-ի կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում,
- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առնտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում, ավտոկանգառների ժամանակակից տաղավարների կառուցում,
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
- ՏԻ-անը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,

- նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

Համայնքի զարգացման 2016-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ՏԻ-անը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման , ինչպես նաև ջերմոցային տնտեսություններին աջակցության միջոցով,
- միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքի կենտրոնի հետ բոլոր բնակավայրերի հասարակական տրանսպորտի գործունեության ապահովում, բոլոր բնակավայրերում ավտոկանգառների ստեղծում,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազաֆիկացման, խմելու և տեխնիկական ջրի ջրամատակարարման արտաքին և ներբնակավայրային համակարգերի նորոգման և շահագործման, աղբահանության և սանիտարական ծառայությունների կազմակերպման և մատուցման ճանապարհով,
- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ դպրոցների շենքերի նորոգման և ջեռուցման, ներքին հարդարման, դռների, պատուհանների և սանհանգույցների փոխարինման միջոցով,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների (բնակավայրերի վարչական ներկայացուցիչների նստավայրերի, մանկապարտեզի, բուժկետի) շենքերի հիմնանորոգում
- համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատներին և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով արտոնություններ տրամադրելու) միջոցով:

3.ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2016-2021թ.թ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Արարատի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2016-2021թթ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ ոռոգման ջրի սակագնի վերանայման հոտ կապված , ինչպես նաև պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով .
- Համայնքի հանրակրթական դպրոցի և մանկապարտեզի շենքերի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում, դռների, պատուհանների և սանհանգույցների փոխարինում, ջեռուցում՝ բարելավելով դպրոցական հանրակրթության որակը,
- Համայնքի ամառանոցային հատվածի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում կամ մասնակի վերանորոգում և ջրամատակարարման բարելավում՝ համագործակցության ներգրավելով շահագրգիռ կազմակերպություններին,
- Նոր Կյուրին համայնքի տնամերձ հողամասերը սնուցող հիմնական ջրագծի , որը կառուցվել է 1980 - ական թթ., պետական ծրագրի շրջանակներում .
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում,
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում,

2016-2021թթ. ընթացքում Հայաստանում ընթացող վարչատարածքային բարեփոխումների և (կամ) միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- ներհամայնքային և միջհամայնքային հասարակական տրանսպորտի համակարգի ձևավորում, դպրոցականների ու երիտասարդության շրջանում բնապահպանական և ագրոբիզնեսի կառավարման գիտելիքների տարածումե ծրագիրը
- Հնարավոր այլ ծրագրեր ու միջոցառումներ:

2016-21թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Արարատի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Կատարելով համայնքի 2016-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները՝ պետք է հաշվի առնել

1) Համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսման համար որպես ելակետային տվյալներ են ընդունվել 2014-15թթ. բյուջեների մուտքերի փաստացի գանձման ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարի նախատեսելով որոշակի աճ: Մուտքերի աճը նախատեսվել է՝ հիմք ընդունելով համայնքի հետագա զարգացման հետ կապված պատկերացումներն ու ակնկալիքները, նոր ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը և դրանց դիմաց վճարների գանձման հնարավորությունները և այլն:

2) ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների ցումարները կանխատեսելու համար, որպես 2016թ. ցուցանիշ հիմք է ընդունվել նախկին տարիների ելակետային տվյալները:

Աղյուսակ 3. Համայնքի 2014-2015թ.թ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2016-2020թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2014թ. նախատ.	2015թ. Նախատ.	2016թ. նախատ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021 կանխ
1	2	3	4	3	4	5	6	7	8
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	24181.02	22439.6	------	23001.0	23900.0	24200.0	24280.0	25080.0
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*1	18730.8	20246.6	21705.0	22001.0	22701.0	23200.0	23280.0	24080.0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ								
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	0	0	150.0	150.0	150	150.0	200.0	200.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	0	0	150.0	150.0	150	150.0	200.0	200.0
	Հողի հարկ	1850.5	1695.0	1460.0	1500.0	1500.0	1500.0	1500.0	1700.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	1710.5	2278.9	2450.0	3100.0	3300.0	3300.0	3300.0	3400.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	1710.5	2278.9	2450.0	3100.0	3300.0	3300.0	3300.0	3400.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ								
	Տեղական տուրքեր	90.0	105.0	85.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ								
	Պետական տուրքեր								
1.5	Այլ հարկային եկամուտներ								
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ								
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի								

	գումարների նկատմամբ								
2.	**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**								
2.1	**Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**								
2.2	**Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**								
2.3	**Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**								
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	13925.8	14855.3	17000.1	17000.1	17500.0	18000.0	18000.0	18500.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	810.0	902.4	410.7	0.0	0.0	0.0	0.0	0.0
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)								
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ								
2.4	**Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**								
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)								
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ								
3.	**ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ***	160.0	290.0	150.0	150.0	150.0	150.0	180.0	180.0
3.1	**Տոկոսներ**								
3.2	**Շահաբաժիններ**								
3.3	**Գույքի վարձակալությունից եկամուտներ**								
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	160.0	290.0	150.0	150.0	150.0	150.0	180.0	180.0

	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ								
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ								
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր								
3.4	**Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում**								
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ								
3.5	**Վարչական գանձումներ**	184.0	120.0	0	0	0	0	0	0
	Տեղական վճարներ	184.0	120.0	0	0	0	0	0	0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ								
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող								

	(գանձվող) վճարներ								
3.6	**Մուտքեր տույժերից, տուգանքներից**								
	Վարչական իրավախախտումներ ի համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ								
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորություններ ի չկատարման դիմաց գանձվող տույժերից								
3.7	**Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**								
3.8	**Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**								
3.9	**Այլ եկամուտներ***								
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր								
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր								
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ								
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	4782.7	1135.0	717.0	700.0	800.0	500.0	500.0	500.0
1.	**Հիմնական միջոցների իրացումից մուտքեր**								
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր								
	Շարժական գույքի իրացումից մուտքեր								
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր								
2.	**Պաշարների իրացումից մուտքեր**								
3.	**Բարձրարժեք ակտիվների**								

	իրացումից մուտքեր								
4.	**Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր**								
	Հողի իրացումից մուտքեր	4782.7	1135.0	717.0	700.0	800.0	500.0	500.0	500.0
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր								
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)								
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)								
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ								
1.1	**Արժեթղթեր**								
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր								
	-հիմնական գումարի մարում								
1.2	**Վարկեր**								
	-վարկերի ստացում								
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում								
1.3	**Փոխատվություններ**								
	-բյուջետային փոխատվությունների ստացում								
	-ստացված փոխատվությունների գումարի մարում								
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ								
2.1	**Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն**								
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր								
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի								

	(բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր								
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում								
2.2	**Փոխատվություններ**								
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր								
	-փոխատվությունների տրամադրում								
2.3	**Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը**	667.52	1058.0		300.0	400.0	500.0	500.0	500.0
2.4	**Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս**								
2.5	**Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս**								
2.6	**Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատված ում**								
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը								
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ								
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ								
1.1	Արժեթղթեր								
	-թողարկումից և տեղաբաշխումից								

	մուտքեր								
	-հիմնական գումարի մարում								
1.2	**Վարկեր**								
	-վարկերի ստացում								
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում								
1.3	**Փոխատվություններ**								
	- փոխատվությունների ստացում								
	-ստացված փոխատվությունների գումարի մարում								

Անհրաժեշտ է նկատել, որ համայնքի գալիք 5 տարիների բյուջեներում ոչ ֆինանսական ակտիվների (հող, գույք) իրացման գծով նախատեսվել են ընդամենը՝ 3000.0 հազ. դրամի մուտքեր, իսկ փոխառու միջոցներից (փոխատվություն, վարկ) մուտքեր չեն նախատեսվել: Սա նշանակում է, որ համայնքն իր ֆոնդային բյուջեում կարող է նախատեսել կապիտալ ծախսեր ու ծրագրեր՝ հիմնականում համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից համայնքի ֆոնդային բյուջե հատկացումների հաշվին, ինչպես նաև հողերի իրացումից մուտքերի հաշվին:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատողների 2016 թվականի միայն աշխատավարձի տարեկան ֆոնդը նախատեսվել է 11394.0 հազ. դրամ իսկ աշխատակազմի պահպանման մյուս ընդհանուր ծախսերը՝ 2395.0 հազ. դրամ: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ՝

2018-2021թթ. ընթացքում համայնքի ՏԻՄ-ը նախատեսում է համայնքի ղեկավարի, աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և պահպանման այլ ծախսերի բարձրացում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ համայնքի 2016-21թթ. տարեկան բյուջեներից (տե՛ս աղյուսակ 3) հնարավորություն կլինի կատարելու մոտ 5.4 մլն դրամի ծախսեր կապիտալ աշխատանքներ կատարելու համար, եթե, իհարկե, պայմանականորեն ընդունենք, որ տվյալ տարվա վարչական բյուջեում, բացի համայնքի աշխատակազմի պահպանման ծախսերից, գործառական դասակարգման այլ ուղղություններով ընթացիկ ծախսեր չեն նախատեսվելու և չեն իրականացվելու: Իսկ եթե տվյալ տարվա վարչական բյուջեում նախատեսվեն և իրականացվեն այլ ընթացիկ ծախսեր ևս, ապա, բնականաբար, ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի և ծրագրերի համար նախատեսվող միջոցները կպակասեն համապատասխան չափով:

Այսպիսով, համայնքի տվյալ տարվա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի չափն ուղղակիորեն կախված կլինի նրանից, թե որքան կկազմեն ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարը համայնքի այդ տարվա վարչական բյուջեում և որքան գումար կմնա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսեր կատարելու համար:

5.ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (**աղյուսակ 4**)՝ ներառելու համայնքի 2016-2021թթ. ՀԶՀԾ-ում:

Աղյուսակ 4. Համայնքի 2016-21թթ. ՀԶՀԾ-ում ներառելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագիրն առաջարկողը	Ծրագրի մոտավոր արժեքը, ֆինանսավորման աղբյուրը, հազ. դրամ
1	Համայնքի գլխավոր հատակագիծ	Համայնքապետ	3 000.0
2	Համայնքի որոշ հատվածի ներքին ոռոգման ցանցի կառուցում	Համայնքապետ	3. 000.0
3	Համայնքը սնուցող հիմնական ոռոգման ջրագծի հիմնանորոգում	Համայնքապետ	70 000.0

4	Դպրոցի և մանկապարտեզի շենքի գազաֆիկացում	Համայնքապետ	20000.0
5	Որոշ փողոցների խճապատում	Համայնքապետ	2000.0
6	Համայնքի գերեզմանատուն տանող ճանապարհի նորոգում	Համայնքապետ	10000.0
7	Սելսմիկ ռիսկերի նվազեցման միջոցառումներ	Համայնքապետ	1 000.0

Համայնքի զարգացմանը խոչընդոտող կարևորագույն խնդիրներից է համայնքում ոռոգման ջրի սակագնի բարձր գինը և համայնքի ամառանոցային թաղամասի խմելու ջրի ցանցի բարձիթողի որության հետ կապված հարցերը, որոնք ուղղակի ներդրումներ չեն պահանջում և պահանջում են առաջնային լուծում, ինչի կապակցությամբ նախատեսված են ակտիվ քննարկումներ կազմակերպել (շարունակել) շահագրգիռ կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների հետ:

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- հանրության աջակցությունը,
- ուղղակի և անուղղակի շահառուների թիվ,
- հարատևություն (կենսունակություն),
- ազդեցություն սոցիալական խոցելի խմբերի վրա, աղքատության նվազեցում,
- հիմնական միջոցների (ենթակառուցվածքների) պահպանում:

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն իր նիստում քննարկել և որոշել է վերևում առաջարկված համայնքային ոլորտային ծրագրերի առաջնահերթությունները:

Ինչպես երևում է ՀԶՀԾ-ի 4-րդ բաժնի աղյուսակ 3-ից, համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերը ինքնամյա հատվածում կազմելու են սահմանափակ միջոցներ : Դա նշանակում է, որ համայնքի բյուջեի ֆինանսավորմամբ ՀԶՀԾ-ում հնարավոր է ներառել ծրագրեր միայն նշված գումարի սահմաններում: Համայնքի մանկապարտեզի, մշակույթի տան, ճանապարհի կապիտալ նորոգման ծախսերի համար նախատեսվում է դիմել ՀՀ Կառավարությանը կամ դոնոր կազմակերպություններին:

Աղյուսակ 6. Համայնքի 2016-2021թթ. ֆինանսապես ապահովված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ամփոփագիր

Հ/հ	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը, հազ. դրամ	Ծրագրի կատարումն ըստ տարիների						Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
					2016	2017	2018	2019	2020	2021	Համայնքային բյուջե	Դոնոր կազմ.-եր	Պետբյուջե
1.	Համայնքի գլխավոր հատակագիծ	Հատ	1	3000.0				3000.0			3000.0		
2	Համայնքի որոշ հատվածի ներքին ոռոգման ցանցի կառուցում	Գծ/մ	400	3000.0		3.000					3000.0		
3	Համայնքը սնուցող հիմնական ոռոգման ջրագծի հիմնանորոգում	Գծ/մ	1500	70000.0		70000.0							70000.0
4	Դպրոցի և մանկապարտեզի շենքի գազաֆիկացում	Ք/մ	1829	20.000			20000.0						20.000
5	Որոշ փողոցների խճապատում	կմ	1.0	2000.0			1000.0			1000.0	2000.0		
6	Համայնքի գերեզմանատուն տանող ճանապարհի նորոգում	կմ	2	10.000					10.000			10000.0	
7	Սելսմիկ ռիսկերի նվազեցման միջոցառումներ	հատ	1	1000.0					1000.0		1000.0		

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերից (գլխավոր հատակագիծ, գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն) կա միայն քաղքաշինական կանոնադրությունը:

Քանի որ ,Քաղաքաշինության մասինե ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման (մշակման) պատվիրատուն համայնքն է, հնգամյա ժամանակահատվածում նախատեսվում է համագործակցություն ծավալել Հայաստանում գործող նախագծային ինստիտուտների հետ՝համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքների նախահաշիվները, համայնքի բյուջեով նախատեսելու համար:

Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ

2016-2021թ.թ. ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ կենցաղային աղբը չթափելու դրա համար չնախատեսված վայրերում, գերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից ու վնասումից,
- յուրաքանչյուր տարի գարնանը համայնքում կազմակերպել ,Մաքուր համայնքե կարգախոսով 2-3 շաբաթօրյակներ՝ իրականացնելու բնության և շրջակա միջավայրի մաքրության, ծառատնկման աշխատանքներ, դրանց ներգրավելով նաև երիտասարդներին և դպրոցականներին և այլն:

Աշխատակազմի քարտուղար՝ Խ. Սարգսյան